ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

20.10.22 ք. Իջևան

Նախագահ՝ Ա. Մարգարյան /դեկանի ԺՊ/

Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցել են գիտական խորհրդի նախագահ Ա. Մարգարյանը, քարտուղար Ա. Ալեքսանյանը, անդամներ՝ Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Գ. Ալեքսանյանը, Ա. Սարիբեկյանը, Թ. Վարդանյանը, Պ. Ասլիբեկյանը, Գ. Ավետիսյանը, Դ. Աֆյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Թ. Ջանվելյան, Հ. Սանթրոսյանը: Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մարգարյանը:

Բաց քվեարկությամբ 13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում 4/1.-Հաստատել նիստի օրակարգը.

Օրակարգ

1. Առկա ուսուցման համակարգում 2022-2023 ուստարում նախատեսված ավարտական աշխատանքների բաշխված ցանկի հաստատման մասին /զեկ.Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:
2. Հաղորդում 1-ին կիսամյակում նախատեսված /առկա ուսուցման/ հետազոտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ /զեկ. Մ. Միքայլեյան, Գ. Հովհաննիսյան/:
3. Ուսանողի կրթական կարիքների վերհանման հարցերով քննարկում /զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:
4. Հեռակա ուսուցման դասատախտակների քննարկում և հաստատում /զեկ. Ա. Մարգարյան/:
5. Ընթացիկ հարցեր.

5.1. Հաղորդում «Տավուշի մարզի գյուղական տարաբնակեցման զարգացման արդի միտումները և առկա հիմնախնդիրները» թեմայով ԵՊՀ ԻՄ ներքին դրամաշնորհի կատարման եռամսյա հաշվետվության և թեմայի ֆինանսավորումը շարունակելու մասին /զեկուցող՝ Ա. Պոտոսյան/:

1. Լսեցին – 2022-2023 ուստարում նախատեսված ավարտական աշխատանքների ըստ ղեկավարների և ուսանողների բաշխված ցուցակների հաստատման մասին /զեկ. Մ. Միքայլեյան, Գ. Հովհաննիսյան/:

Ա. Մարգարյանը ներկայացրեց, որ 2022-2023 ուստարում ֆակուլտետի երկու մասնագիտությունների գծով նախատեսված ավարտական աշխատանքի թեմաների նախագծերը ուսանողներին է տրամադրվել կարգով սահմանված ժամկետներում: Որոշակի ճշգրտումներից հետո ամբիոններում կատարվել է ավարտական աշխատանքների բաշխում ըստ դասախոսների և ուսանողների:

Արտահայտվեցին - Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նրանք նշեցին, որ ամբիոնների նիստերում քննարկվել և ճշգրտվել են առկա ուսուցման ավարտական աշխատանքի թեմաները՝ հաշվի առնելով ուսանողների առաջարկությունները: Համաձայն անհատական ծանրաբեռնվածության «Ընդհանուր տնտեսագիտության» և «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնների նիստերում քննարկվել և հաստատվել են ավարտական աշխատանքների թեմաները ըստ ղեկավարների և ուսանողների, որոնք այժմ ներկայացվում են ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը /ցանկերը կցվում են/:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմանդրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24. 2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին – հաստատել «Ֆինանսներ», «Զբոսաշրջություն» /առկա/ մասնագիտությունների 2022-2023 ուստարվա՝ ըստ ղեկավարների և ուսանողների բաշխված ավարտական աշխատանքների ցուցակները:

2. Լսեցին- Հաղորդում 1-ին կիսամյակում /առկա ուսուցմամբ/ նախատեսված հետազոտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ /զեկ.Մ. Միքայլեյան, Գ. Հովհաննիսյան/:

Գ. Հովհաննիսյանը հաղորդեց, որ այս կիսամյակ Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնում հետազոտական բաղադրիչով դասընթացները երկուսն են, որոնք իրականացվում են Զբոսաշրջություն ԿԾ երրորդ կուրսում: Նախորդ տարվա փորձից ելնելով, կարելի է արձանագրել, որ այս տարի հետազոտական աշխատանքների

հարցում փոքր-ինչ ուսանողները հմտացել են: Աշխատանքները վերահսկվում են ամբիոնի կողմից և ընթացքի մեջ են:

Մ. Միքայելյանը նշեց, որ այս կիսամյակ Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի չորս դասընթացներում ներառված են հետազոտական բաղադրիչ՝ 2 դասընթաց Ֆինանսներ ԿԾ 3-րդ և 2 դասընթաց Ֆինանսներ ԿԾ 4-րդ կուրսերում: Նա նշեց, որ հետազոտական բաղադրիչի ներդրումն արդյունավետ է և միտված է գլխավոր նպատակի իրականացմանը, այն է՝ չորրորդ կուրսի ուսանողների պատրաստվածությունը ավարտական աշխատանք կատարելուն:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդն որոշեց.

Որոշեցին –1-ին կիսամյակում նախատեսված հետազոտական աշխատանքների կատարման ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

3. Լսեցին- Ուսանողի կրթական կարիքների վերհանման հարցերով քննարկման մասին /զեկ. Ա. Մարգարյան/:

Ա.Մարգարյանը ներկայացրեց, որ ուսանողների կրթական կարիքների հարցը մշտապես գտնվում է Տնտեսագիտության ֆակուլտետի աշխատակազմի ուշադրության կենտրոնում: Դրանք վեր են հանվում տարբեր մեխանիզմներով. հարցումներ, ուսանողները դիմում են դասախոսներին, ամբիոն, դեկանատ, ԿԾՂ-ներին, դեկանին, ուսանողական կառույցներին: Ֆակուլտետում տեղադրված է արագ արձագանքման արկղ, որտեղ ուսանողները կարող են անանուն կերպով ներկայացնել իրենց առաջարկությունները: Վերհանված խնդիրները հիմնականում գտնում են իրենց լուծումները, չկարգավորման դեպքում մեկնաբանվում են պատճառները: Սակայն վերհանված այդ խնդիրները քիչ են արձանագրվում ամբիոններում և առաջարկում եմ ամբիոններում ԿԾՂ-ների պատասխանատվությամբ հավաքագրել նկատված խնդիրները և լուծումները՝ նշված գործընթացներում անպայման ընդգրկելով ուսանողական կառույցներին:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդն որոշեց.

Որոշեցին.- Ֆակուլտետի մասնագիտական ամբիոններում ԿԾՊ-ների պատասխանատվությամբ պահել մատյաններ վերհանված կրթական կարիքների և լուծումների գրանցումների համար:

4. Լսեցին.- Հեռակա ուսուցման դասատախտակների քննարկման և հաստատման մասին /զեկ. Ա. Մարգարյան/:

Ա. Մարգարյանը նշեց, որ հեռակա ուսուցման առաջին կիսամյակի դասատախտակը կազմվել է ըստ ուսումնական պլանի՝ հաշվի առնելով դասավանդողների հերթափոխերը և լսարանային ֆոնդը: Դասացուցակները քննարկվել են մյուս ֆակուլտետների դեկանների պաշտոնակատարների հետ և վերացվել են գուգադիպումները: Դրանք համաձայնեցված են դասավանդող դա սախոսների հետ:

Դեկանի պաշտոնակատարը հաղորդեց, որ երկու մասնագիտությունների գծով կազմված դասատախտակները հարմար պայմաններ են ապահովում արդյունավետ դասապրոցես իրականացնելու համար:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդն որոշեց.

Որոշեցին.- Հեռակա ուսուցման դասատախտակները ներկայացնել ՈՒՄՎ հաստատման:

5. Ընթացիկ հարցեր

5.1.Լսեցին-Հաղորդում «Տավուշի մարզի գյուղական տարաբնակեցման զարգացման արդի միտումները և առկա հիմնախնդիրները» թեմայով ԵՊՀ ԻՄ ներքին դրամաշնորհի կատարման եռամսյա հաշվետվության և թեմայի ֆինանսավորումը շարունակելու մասին /զեկուցող՝Ա. Պոտոսյան/:

Ա. Պոտոսյանը հայտնեց, որ 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակում ԵՊՀ ԻՄ-ում հայտարարված ներքին դրամաշնորհային մրցույթի արդյունքում դրամաշնորհ է տրամադրվել «Տավուշի մարզի գյուղական տարաբնակեցման զարգացման արդի միտումները և առկա հիմնախնդիրները» ծրագրին:

Նա ներկայացրեց եռամսյա հաշվետվությունը: Այն քննարկվել է նաև ամբիոնի նիստում: Ծրագրի կատարողների /դասախոս՝ Ս. Սաֆարյան, ուսանող՝ Ի. Սարիբեկյան/ կողմից հետազոտություններ են իրականացվել Տավուշի մարզում:

Գիտական խորհուրդը միաձայն քվեարկությամբ հավանություն տվեց ներկայացված հաշվետվությանը: Ծրագրի կատարողները հետևում են թեմայի իրականացման աշխատանքային պլանին:

Որոշեցին- 1. ԵՊՀ ԻՄ ներքին դրամաշնորհի «Տավուշի մարզի գյուղական տարարնակեցման զարգացման արդի միտումները և առկա հիմնախնդիրները» եռամյա հաշվետվության հաղորդումն ընդունել ի գիտություն,

2. Երաշխավորել թեմայի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարությունը:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ա. Մարգարյան

Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան